Արձանագրություն N 3

«ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-19/9» ծածկագրով գնահատող հանձնաժողովի նիստի

Ք. Սպիտակ 13.05.2019թ.
ժ. 12:00

Մասնակցում են՝

Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Միրզոյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Ադամյան, Ն. Յարմալոյան,

Հանձնաժողովի քարտուղար՝ Արսեն Ավետիսյան

Ընդունել ի գիտություն, որ 02.05.2019թ.-ին Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացրած հարցման վերաբերյալ 07.05.2019թ.-ին տրամադրվել է տեղեկատվություն, որի համաձայն ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-19/9 ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած մասնակից «Մ.ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունի, ինչպես նաև հայտը ներկայացնելու տարվան նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից, իսկ ակտիվների հաշվեկշռային արժեքը գերազանցում է պարտավորությունների հաշվեկշռային արժեքը:

«Մ.ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է որակավորման չափանիշների համապատասխանությունը հիմնավորող հրավերով պահանջվող փաստաթղթերը, որոնք գնահատող հանձնաժողովը ուսումնասիրել է և գնահատել բավարար:

Հաշվի առնելով վերոգրյալը, գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-19/9 ծածկագրով գնման ընթացակարգի հաղթող (ընտրված) մասնակից ճանաչել «Մ.ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ին:

Որոշումը ընդունվել է՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-19/9 ծածկագրով գնման ընթացակարգի համար անգործության ժամկետ չկիրառել:

Որոշումը ընդունվել է՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. «Մ.ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ին ծանուցել՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի ապահովում և կնքել Սպիտակ համայնքի կարիքների համար ասֆալտապատ ճանապարհների փոսային նորոգման աշխատանքների կատարման գնման պայմանագիր:

Որոշումը ընդունվել է՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Հ. Միրզոյան

Անդամներ՝ _____ Ա. Ադամյան

_____ Ն. Յարմալոյան

Քարտուղար՝ _____ Ա. Ավետիսյան